ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

No 29-Ա 04 հունիսի 2020

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 10-Ի N 19-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը, ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության (այսուհետ՝ վարչություն) կառուցվածքում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) Մասնագիտական կրթության քաղաքականության մշակման ու Մասնագիտական կրթության կազմակերպման և համակարգման բաժինները միաձուլել՝ ստեղծելով Վարչության կառուցվածքում ընդգրկված Ծրագրերի իրականացման և գնահատման բաժին,

2) Վարչության կազմում ստեղծել նոր բաժիններ՝

ա. Ռազմավարական պլանավորման բաժին,

բ. Ուսանողների աջակցության բաժին:

2. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 10-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչության կանոնադրությունը հաստատելու մասին» N 19-Լ հրամանով հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Նախարար Ա. Հարությունյան

04.06.2020

X

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Signed by: HARUTYUNYAN ARAYIK 1209790378

Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2020 թվականի հունիսի ——ի N -Լ հրամանի

«Հավելված
Հայաստանի Հանրապետության
կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարի 2019 թվականի հունիսի 10-ի N 19-Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԵՏԲՈՒՀԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) բարձրագույն և հետբուհական կրթության վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեությունն իրականացնում է Սահմանադրությանը, օրենքներին, նախարարության կանոնադրությանը և սույն կանոնադրությանը համապատասխան:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում է Նախարարը:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

4. Վարչության նպատակն է ապահովել բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի ռազմավարական պլանավորումը և քաղաքականության մշակումը, ծրագրերի իրականացումը և գնահատումը, ուսանողներին աջակցության ցուցաբերումը, ինչպես նաև բարձրագույն կրթության և հետազոտության համակարգի գործունեության կարգավորումը և որակի ապահովման ու կատարելագործման արդյունավետ իրավական հենքի ստեղծումը:

5. Վարչության խնդիրներն են՝

1) բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում բարեփոխումների իրականացումը,

2) բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի զարգացման ապահովումը,

3) բարձրագույն և հետբուհական կրթության բովանդակային հենքի ու կրթական գործընթացի բարելավման, արդիականացման և որակի ապահովման նպաստումը,

4) եվրոպական բարձրագույն կրթական տարածքին ինտեգրման ապահովումը,

5) բարձրագույն ուսումնական հաստատությունների թափանցիկության, հաշվետվողականության, արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացումը,

6) բարձրագույն կրթության և հետազոտության միջազգային տեսանելիության ու գրավչության բարձրացման, միջազգայնացմանը խթանող միջավայրի ձևավորման աջակցումը,

7) բարձրագույն կրթության հասանելիության և մատչելիության ապահովումը,

8) բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի զարգացման երկարաժամկետ և միջնաժամկետ պետական ծրագրերի մշակման և դրանց գնահատման ապահովումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

6. Վարչությունը կազմված է վարչության պետից, վարչության պետի տեղակալից և բաժիններից՝

1) Ռազմավարական պլանավորման բաժին,

2) Ծրագրերի իրականացման և գնահատման բաժին,

3) Ուսանողների աջակցության բաժին:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

7. Վարչությունն իր նպատակների ու խնդիրների իրագործման համար իրականացնում է հետևյալ գործառույթներն ըստ բաժինների՝

1) Ռազմավարական պլանավորման բաժին՝

ա. ռազմավարական պլանավորման գործընթացի իրականացում, բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում կառավարության և նախարարության գործողությունների ծրագրերի վերաբերյալ առաջարկների ներկայացում,

բ. բարձրագույն և հետբուհական կրթության զարգացման հեռանկարային ու նպատակային ռազմավարական ուղղությունների ձևավորում,

գ. պետական քաղաքականության ձևավորման վերաբերյալ առաջարկությունների մշակում՝ հիմք ընդունելով բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում տիրող իրավիճակը,

դ. որակավորումների ազգային շրջանակի, որակավորումների ոլորտային շրջանակների մշակման և հաստատման աշխատանքների իրականացում,

ե. Հայաստանի Հանրապետությունում գործող բուհերի ու գիտական կազմակերպությունների տարատեսակների, դրանց դասակարգման չափանիշների և պահանջների մշակման աշխատանքների իրականացում և հանրապետության տարածքում օպտիմալ տեղաբաշխման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

զ. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրերի և տվյալ տարվա բյուջետային հայտերի մշակում,

է. բուհերի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշների մշակում,

ը. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում մասնագետների պատրաստման առաջարկների մշակում և սկզբունքների ձևավորում,

թ. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում միջազգային փորձի ուսումնասիրություն ու վերլուծություն, դրա ներդրման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

ժ. տվյալների բազաների ձևավորման, բարձրագույն և հետբուհական ուսումնական հաստատությունների գործունեության վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման և մշակման համակարգերի ներդրման աշխատանքներին մասնակցություն,

ժա. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքների և մեթոդաբանության մշակման աշխատանքներին մասնակցություն,

ժբ. միջազգային կազմակերպությունների ներգրավման աշխատանքներին մասնակցություն,

ժգ. Կառավարության գործունեության ծրագրից, ինչպես նաև կառավարության քաղաքականության այլ փաստաթղթերից բխող միջոցառումների իրականացման ապահովում,

ժդ. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի իրավական նորմատիվ ակտերի մշակման աշխատանքներին մասնակցություն,

ժե. իր իրավասության շրջանակներում պետական քաղաքականության փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում,

ժզ. բարձրագույն և հետբուհական կրթության հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում՝ ըստ անհրաժեշտության,

ժէ. իր իրավասության շրջանակներում նախարարություն հասցեագրված ֆիզիկական և իրավաբանական անձանց գրությունների, դիմումների, դիմում-բողոքների ուսումնասիրություն,

ժը. Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորությունների իրականացման մասնակցություն:

2) Ծրագրերի իրականացման և գնահատման բաժին՝

ա. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում առկա խնդիրների վերլուծում և վերհանում, հայտնաբերված խնդիրների լուծումների վերաբերյալ առաջարկությունների ներկայացնում, ինչպես նաև դրանց առավելությունների ու ռիսկերի գնահատում,

բ. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում վերլուծա-կանխատեսողական գործունեություն իրականացում և գնահատում,

գ. բարձրագույն կրթության ակադեմիական ոլորտների և կրթական ծրագրերի ձևավորման և նոր կրթական ծրագրերի ներդրման աշխատանքների իրականացում,

դ. բուհերի գործունեության կատարողականի արդյունքային ցուցանիշների նկատմամբ հաշվետվողականության պահանջների համակարգման աշխատանքների իրականացում,

ե. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի և միջոցառումների իրականացում և ֆինանսավորման կարգերի, ֆինանսավորման գործակիցների, չափանիշների և նորմատիվների մշակում,

զ. բակալավրի ու անընդհատ և ինտեգրված ծրագրի (ներառյալ՝ ընդհանուր պահանջների և մրցույթի անցկացման ընդհանուր չափանիշների) ընդունելության, ինպես

նաև մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման կարգերի մշակման աշխատանքների իրականացում,

է. Եվրոպական բարձրագույն կրթական տարածքի հիմնական սկզբունքների և ուղղությունների ներդրմանն ուղղված աշխատանքների իրականացում, ինչպես նաև բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) և միջպետական համագործակցության ծրագրերի մշակմանն մասնակցություն,

ը. իրավական նորմատիվ ակտերի, նախարարի և գլխավոր քարտուղարի հրամանների, հանձնարարականների, գործունեության երկարաժամկետ և աշխատանքային ծրագրերի կատարման աշխատանքների իրականացում և դրանց գնահատում,

թ. բարձրագույն ուսումնական հաստատությունների ոչ ֆինանսական ցուցանիշների ամփոփում,

ժ. հանրային (պետական) բուհերի կառավարման խորհուրդների ձևավորման իրավական նորմատիվ ակտերի նախագծերի մշակում,

ժա. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտում պետական պարգևների ներկայացման և գերատեսչական պարգևների շնորհման աշխատանքների վերաբերյալ եզրակացությունների և առաջարկությունների ներկայացում,

ժբ. բարձրագույն և հետբուհական կրթության լիցենզավորման, ինչպես նաև ինստիտուցիոնալ ու ծրագրային հավատարմագրման կարգի և չափանիշների մշակման և գործընթացների իրականացման աշխատանքներին մասնակցություն,

ժգ. Կառավարության գործունեության ծրագրից, ինչպես նաև կառավարության քաղաքականության այլ փաստաթղթերից բխող միջոցառումների իրականացման ապահովում,

ժդ. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի իրավական նորմատիվ ակտերի մշակման աշխատանքներին մասնակցություն,

ժե. իր իրավասության շրջանակներում պետական քաղաքականության փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում,

ժզ. բարձրագույն և հետբուհական կրթության հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում՝ ըստ անհրաժեշտության,

ժէ. իր իրավասության շրջանակներում նախարարություն հասցեագրված ֆիզիկական և իրավաբանական անձանց գրությունների, դիմումների, դիմում-բողոքների ուսումնասիրություն,

ժը. Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորությունների իրականացման մասնակցություն:

3) Ուսանողների աջակցության բաժին՝

ա. ուսանողական որոշակի խմբերին (լավագույն ուսանող մրցույթ և այլն) ֆինանսական աջակցության տրամադրման աշխատանքների կազմակերպում և իրականացում,

բ. բարձրագույն կրթություն ստացող սոցիալական խոցելի խմբերին պատկանող ուսանողների ուսման վարձավճարների փոխհատուցմանն ուղղված աշխատանքների կազմակերպում և իրականացում,

գ. տվյալ ուսումնական տարվա համար ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) և ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) բակալավրի ու անընդհատ և ինտեգրված կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ձևավորման ու բաշխման աշխատանքների իրականացում,

դ. տվյալ ուսումնական տարվա համար ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) բարձրագույն կրթությամբ մասնագետների պատրաստման պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի) մագիստրոսի կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ձևավորման ու բաշխման աշխատանքների իրականացում,

ե. տվյալ ուսումնական տարվա համար ըստ մասնագիտությունների (կրթական ծրագրերի) հետբուհական կրթությամբ մասնագետների պատրաստման պետության կողմից ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար) կլինիկական օրդինատորի, ինչպես նաև ասպիրանտուրայի կրթական ծրագրերով ընդունելության տեղերի ձևավորման ու բաշխման աշխատանքների իրականացում,

զ. բարձրագույն և հետբուհական կրթության ավարտական փաստաթղթերի (դիպլոմների)՝ այդ թվում՝ համատեղ դիպլոմի, և դիպլոմի հավելվածի ձևանմուշի մշակում,

է. բարձրագույն ուսումնական հաստատություններին պետական բյուջեից ֆինանսավորվող (ինստիտուցիոնալ, մրցակցային, նպատակային ֆինանսավորում, ինչպես նաև պետական ուսանողական կրթաթոշակների և ուսանողական ֆինանսական նպաստների տրամադրում) գործընթացի կազմակերպման աշխատանքներին մասնակցություն,

ը. բարձրագույն և հետբուհական կրթության նոր կրթական ծրագրերի ներդրման աշխատանքներին մասնակցություն,

թ. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի միջնաժամկետ ծախսային ծրագրերի ու տվյալ տարվա բյուջետային հայտերի կազմման աշխատանքներին մասնակցություն,

ժ. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված ծրագրերի ֆինանսավորման սկզբունքների և մեթոդաբանության մշակման աշխատանքներին մասնակցություն,

ժա. բակալավրի ու անընդհատ և ինտեգրված ծրագրի (ներառյալ՝ ընդհանուր պահանջների և մրցույթի անցկացման ընդհանուր չափանիշների) ընդունելության, ինպես նաև մագիստրատուրայի ու ասպիրանտուրայի ընդունելության և ուսուցման կարգերի մշակման աշխատանքներին մասնակցություն,

ժբ. իրավական նորմատիվ ակտերի, նախարարի և գլխավոր քարտուղարի հրամանների, հանձնարարականների, գործունեության երկարաժամկետ և աշխատանքային ծրագրերի կատարման աշխատանքների իրականացման մասնակցություն,

ժգ. Կառավարության գործունեության ծրագրից, ինչպես նաև կառավարության քաղաքականության այլ փաստաթղթերից բխող միջոցառումների իրականացման ապահովում,

ժդ. բարձրագույն և հետբուհական կրթության ոլորտի իրավական նորմատիվ ակտերի մշակման աշխատանքներին մասնակցություն,

ժե. իր իրավասության շրջանակներում պետական քաղաքականության փաստաթղթերի նախագծերի վերաբերյալ դիրքորոշման ներկայացում,

ժզ. բարձրագույն և հետբուհական կրթության հարցերով համաժողովների, խորհրդակցությունների և այլ միջոցառումների կազմակերպում՝ ըստ անհրաժեշտության,

ժէ. իր իրավասության շրջանակներում նախարարություն հասցեագրված ֆիզիկական և իրավաբանական անձանց գրությունների, դիմումների, դիմում-բողոքների ուսումնասիրություն,

ժը. Հայաստանի Հանրապետության օրենքներով և Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով սահմանված այլ լիազորությունների իրականացման մասնակցություն:

V. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

8. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է վարչության պետը, ով անմիջական հաշվետու է նախարարին, և պաշտոնի նշանակվում ու պաշտոնից ազատվում է օրենքով սահմանված կարգով:

9. Վարչության բաժինների ընթացիկ գործունեությունը կազմակերպում և ղեկավարում են բաժնի պետերը:

10. Վարչության պետը, վարչության պետի տեղակալը, բաժինների պետերը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

11. Վարչության պետի, վարչության պետի տեղակալի, բաժինների պետերի, աշխատողների գործառույթները, իրավունքներն ու պարտականությունները, շփումներն ու հաշվետվողականությունը նկարագրող և այդ գործառույթները արդյունավետ իրականացնելու համար անհրաժեշտ մասնագիտական գիտելիքներն ու կոմպետենցիաները, կառավարման համակարգում տեղակայվածությունը սահմանվում են օրենքով սահմանված կարգով հաստատված քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրերով (աշխատատեղի նկարագրով):